Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խթանման և ներդրումային քաղաքականության ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	վիճակագրություն
Տևողություն՝	18 ամիս
Իրականացման ժամանակահատված՝	2015թ. հոկտեմբեր –2017թ. մայիս
Բյուջե՝	0.81 մլն եվրո

Շահառու հաստատություններ՝
Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հայաստանի զարգացման հիմնադրամ

ԵՄ անդամ գործընկեր պետություններ՝
Բիզնես Ֆրանս, Ֆրանսիա

Ծրագրի նկարագիր

Նպատակ՝ Նպաստել Հայաստանի տնտեսական աճի բարձր տեմպերին, տնտեսության արդյունավետ արտադրողական կարողությունների ավելացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, նորարարություններին և տեխնոլոգիաների փոխանցմանը՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների միջոցով:

Բաղադրիչներ՝

I Բաղադրիչ՝ հետներդրումային ծառայությունների զարգացում,

II Բաղադրիչ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ռազմավարության մշակում և ներդրումային միջավայրի բարելավում,

III Բաղադրիչ՝ ներդրումների խթանում և քաղաքականության ուղղորդում

Պարտադիր արդյունքներ՝

ՊԱ 1. Հայաստանի Զարգացման Հիմնադրամն ունի ակնհայտ կարողություն խթանել ներդրումների կրկնողությունը և ընդլայնել երկրում գործող օտարերկրյա ներդրողների շրջանակը,

ՊԱ 2. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ներդրումային քաղաքականության բաժինը ունի հմտություններ և գործիքներ, որոնց կիրառմամբ կմշակվի օտարերկրյա ուղղակի ներդրումների հզոր ռազմավարություն, որն աջակցություն կստանա շահագրգիռ մարմինների կողմից, կսահմանի իր տեսլականը, նպատակները և թիրախները, և հստակորեն

կնկարագրի ակնկալվող օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունները նօգուտները:

ՊԱ 3. Հայաստանի զարգացման հիմնադրամը ներդրումային առաջխաղացման արդյունքներին ուղղված գործակալություն է, որը ճանաչված է օտարերկրյա ներդրողների ներքին շահագրգիռ մարմինների կողմից՝ որպես վստահելի մարմին, որը կարող է ակտիվորեն ուղղորդել օտարերկրյա ուղղակի ներդրումները Հայաստան, ազդել Հայաստանի վերաբերյալ ներդրողների պատկերացումների վրա և ուժեղ քաղաքական շահերի պաշտպանության դերակատարություն ստանձնել:

Լրացուցիչ տեղեկատվություն՝